Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-670[16]-03.12.2014,23.02.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. « Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասում «անհատական» բառը փոխարինել «անձնական» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	**2**	**3**	**4**
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Մկրտչյան	1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հոդված 25-ի 1-ին մասում «հիման վրա» բառերից հետո ավելացնել «, ինչպես նաև Հանրային խորհրդի կողմից առաջարկված թեկնածուների ցանկից» բառերը:	Չի ընդունվել:	Նախագծի 25-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսվում է, որ լիազոր մարմնի ղեկավարը նշանակվում է հասարակական կազմակերպությունների համատեղ առաջարկությունների հիման վրա, իսկ Նախագծում Հանրային խորհրդի վերաբերյալ դրույթներ լրացնելը գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ ՀՀ Նախագահի 2009 թվականի մարտի 11-ի թիվ ՆԿ-36-Ն կարգադրությամբ հաստատված Հանրային խորհրդի կանոնադրության համաձայն՝ Հանրային խորհրդի անդամները մեծամասամբ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ են:
	2. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հոդված 25-ի 2-րդ մասում «կազմակերպությունների» բառից հետո ավելացնել «և Հանրային խորհրդի» բառերը:	Չի ընդունվել:	Տե՛ս կետ 1:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ հիմնավորման մեջ նշվում է, որ	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

	Նախագիծը մշակվել է Եվրապառլամենտի ու Եվրախորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի ԵՄ-95-46 «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի դրույթների հիման վրա: Հարկ է նշել, որի խոսքի ազատության և մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքների հավասարակշռման նպատակով դիրեկտիվի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ անդամ պետությունները պետք է նախատեսեն բացառություններ անձնական տվյալների մշակման վերաբերյալ դրույթներից, եթե դրանց մշակումը իրականցվել է բացառապես լրագրության, գրական և գեղարվեստական նպատակներով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան չկիրառել անձնական տվյալների մշակման վերաբերյալ Օրենքով նախատեսված դրույթները, եթե այդ մշակումը իրականացվում է բացառապես լրագրության կամ գեղարվեստական կամ գրական ստեղծագործության համար:		
	2. Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «3.Տվյալների սուբյեկտը իր կամքով, օգտագործելու նպատակով, բանավոր փոխանցում է մշակողին իր անձնական տվյալների մասին տեղեկությունները»: Միևնույն ժամանակ նույն հոդվածի 7-րդ մասը սահմանում է. «7.Տվյալների սուբյեկտի համաձայնությունը տրվում է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:Հարկ է նշել, որ նման կարգավորումը կարող է հնարավոր տարընթերցումների տեղիք տալ, այդ իսկ պատճառով առաջարկում ենք նախատեսել հստակ կարգավորումներ՝ մանրամասն	Ընդունվել է	Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետում կատարվել են համապատասխան փոփոխություններ

	սահմանելով տեղեկությունների բանավոր փոխանցման, ինչպես նաև բանավոր համաձայնության ներկայացման կարգը և պայմանները:		
	3. Նախագծի 9-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է. «Մշակույթի, արվեստի, գիտության, կրթության, սպորտի, կրոնի և հանրային այլ բնագավառների գործչի մահվան դեպքում նրա աձնական կյանքի տվյալները կարող են մշակվել առանց համաձայնության, եթե մահվան օրվանից անցել է հիսուն տարի»: Նշված կարգավորումից հետևում է, որ մշակույթի, արվեստի,գիտության, կրթության, սպորտի, կրոնի և հանրային այլ բնագավառների գործչի մահվան դեպքում կարելի է մշակել նրա անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ ցանկացած տեղեկություն: Ինչը, կարծում ենք, այդքան էլ արդարացված չէ, ուստի առաջարկում ենք հստակորեն սահմանել, թե մշակույթի, արվեստի, գիտության,կրթության, սպորտի, կրոնի և հանրային այլ բնագավառների գործչի վերաբերյալ հատկապես որ տեղեկատվությունը կարող է մշակվել առանց համաձայնության:	Չի ընդունվել	Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձնական տվյալների երեք խումբ է առանձնացվում՝ անձնական կյանքի, հատուկ կատեգորիայի և կենսաչափական: Նախագծի 9-րդ հոդվածի 11-րդ մասում խոսքը գնում է հենց անձնական կյանքի տվյալների մասին, որը գտնում ենք անհրաժեշտ մշակույթի, արվեստի, գիտության, կրթության, սպորտի, կրոնի և հանրային այլ բնագավառների գործչի մահվան դեպքում այն անհրաժեշտ տվյալներ են, որոնք կարող են մշակվել առանց նրանց համաձայնության, եթե մահվան օրվանից անցել է 50 տարի:
	4. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ծանոթանալ իր անձնական տվյալներին, մշակողից պահանջել ուղղել. ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալները ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար»:Միևնույն ժամանակ նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «2. Ոչ ամբողջական կամ ոչ ճշգրիտ անձնական տվյալների	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:

	դեպքում անձնական տվյալ մշակողը պարտավոր է անհրաժեշտ գործողություններ իրականացնել դրանք ամբողջացնելու, թարմացնելու, ուղղելու կամ ոչնչացնելու ուղղությամբ»: Այս հոդվածների համադրությունից պարզ է դառնում, որ 18-րդ հոդվածում սահմանված չեն տվյալներ մշակողի պարտականությունները այն դեպքերում, երբ անձնական տվյալները ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար: Ուստի առաջարկում ենք 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Ոչ ամբողջական, ոչ ճշգրիտ, հնացած, անօրինական ճանապարհով ձեռք բերված կամ մշակելու նպատակներին հասնելու համար ոչ անհրաժեշտ անձնական տվյալների դեպքում անձնական տվյալ մշակողը պարտավոր է անհրաժեշտ գործողություններ իրականացնել դրանք ամբողջացնելու, թարմացնելու, ուղղելու կամ ոչնչացնելու ուղղությամբ»:		